ՇՆՈՐՀԱԿԱԼԱՆՔԻ ԽՈՍՔ

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի (ՀՀ ԳԱԱ) և Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի (ՀԱՊՀ) Տեղեկագրի Տեխնիկական գիտությունների սերիայի գլխավոր խմբագիրը վերջին երեք տասնամյակում հանդիսացել է ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսի Մարտիրոսյանը: Անվանի գիտնականը ՀՀ ԳԱԱ նախագահի պաշտոնում հանրապետությունում գիտության և գիտական հետազոտությունների արժևորմանը նպատակաուղղված իր գործունեությունը, բեղմնավոր գիտական և դասախոսական աշխատանքը համատեղել է գիտական հանդեսի արդյունավետ ղեկավարման հետ: Նա իր էական ավանդը և անգնահատելի ներդրումն է ունեցել Տեղեկագրի Տեխնիկական գիտությունների սերիայի հետագա զարգացման, գիտական հանրության շրջանում դրա հեղինակության բարձրացման, գիտական հոդվածների թեմատիկայի ընդլայնման և հետազոտությունների մակարդակի բարձրացման, ինչպես նաև անաչառ գրախոսության համակարգի ներդրման գործում:

Խորին շնորհակալություն հայտնելով ակադեմիկոս Ռ.Մ. Մարտիրոսյանին երկար տարիների ընթացքում գիտական հանդեսի հիմնական ուղղորդողի դերը փայլուն կատարելու համար՝ հույս և համոզմունք ենք հայտնում, որ հետագայում ևս, անհրաժեշտության դեպքում, ականավոր գիտնականն իր գործուն աջակցությունը և օժանդակությունը կցուցաբերի պարբերականի բարելավման գործընթացին:

Մեծարգո Ռադիկ Մարտիրոսի,

Շնորհակալանքի խոսքի հետ մեկտեղ՝ խնդրում ենք ընդունել մեր ջերմագին բարեմաղթանքները՝ քաջառողջություն, երկար տարիների երջանիկ կյանք և նորանոր գիտական նվաճումներ, ինչպես նաև հաջող գործունեություն որպես «ՀՀ ԳԱԱ զեկույցներ» հանդեսի գլխավոր խմբագիր:

ՀԱՊՀ ռեկտորատ

Խմբագրական կոլեգիա